

Անթիլիասի մէջ տեղի ունեցաւ հոգեւոյս
Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի
թաղման կարգը



17 Դեկտեմբեր 2023–ին, Մոնթրէալի (Գանատա) մէջ ի տէր հանգաւ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան, մեր ժողովուրդի զաւակներուն երկարամեայ ծառայութիւն մատուցելէ ետք:

Սուրէն Արք. Գաթարոյեանի Տան Կարգն ու Վերջին Օծումը կատարուեցաւ Մոնթրէալի Ս. Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ, 21 Դեկտեմբեր 2023–ին, օրհնութեամբ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ նախագահութեամբ ու ձեռամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանի: Այս առիթով ընթերցուեցաւ Վեհափառ Հայրապետին ցաւակցագիրը, ուր Նորին Սրբութիւնը յատկապէս կ'ըսէր. «Տիպար հոգեւորական մը եղաւ ու մնաց Սուրէն սրբազան իր հոգեւորական կեանքի բոլոր տարիներուն ու բոլոր պայմաններուն մէջ: Այս պարզ, բայց խորիմաստ վկայութեամբ կարելի է բնութագրել հանգուցեալ սրբազանին կեանքն ու ծառայութիւնը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նկատմամբ իր ունեցած անխախտ հաւատարմութիւնը մղիչ ուժը հանդիսացաւ իր ծառայութեան՝ Անթիլիասէն մինչեւ Սուրիա ու Գանատա: Մեր եկեղեցւոյ ծէսին ու աւանդութիւններուն անվթար պահպանումը յատուկ տեղ գրաւեց սրբազանին կեանքին մէջ: Այս ուղղութեամբ ան խօսեցաւ ու գրեց եւ հակառակ իր առողջական փխրուն վիճակին, օրինակելի նուիրումով ծառայեց մեր ժողովուրդին՝ մինչեւ իր երկրաւոր կեանքին վերջին օրը»:

Նկատի ունենալով, որ ննջեցեալ Սուրէն Սրբազանին փափաքն էր հանգչիլ Անթիլիասի Մայրավանքի միաբանական դամբարանին մէջ, իր վախճանեալ միաբանակից եղբայրներուն կողքին, ուստի, Թաղման Կարգը կատարուեցաւ Մայրավանքին մէջ, 27 Դեկտեմբեր 2023–ի առաւօտուն:

Արդարեւ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, «Չարեհան» միաբանական դամբարանին մէջ, Կիլիկեան Ուխտի միաբան հայրեր կատարեցին Գերեզմանի Կարգի շարականներու երգեցողութիւնը եւ աղօթասացութիւնը: Հանգուցեալ սրբազան հօր դագաղը պարուրուեցաւ քարոզասացութիւններով, աւետարանական ընթերցումներով եւ սաղմոսերգութիւններով: Արարողութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը կատարեց հողի օրհնութիւնը՝ աղօթելով. «Օրհնեա, Տէր, ողորմութեամբ քով զհոգս ծառայիս Քո աշտօրիկ, եւ յիշեալ զսա զի հող էր եւ անդէն ի հող դարձաւ ըստ հրամանի քում»:

Թաղման Կարգի աւարտին, միաբան հայրեր միաձայնութեամբ երգեցին «Հայր մեր» եւ «Կիլիկիա» օրհներգը: Ապա, Նորին Սրբութիւնը Վեհարանի դահլիճին մէջ ցաւակցութիւններ ընդունեց:

Ցաւակցագիր

ՀՅԴ Բիւրօն այսու իր խորին ցաւակցութիւնն է յայտնում Իրանի հոգեւոր առաջնորդ աշխոյժա ինքնէին, Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Իպրահիմ Ռայիսիին եւ Իրանի պաշարունակ ժողովուրդին՝ Քերման քաղաքում ահաբեկչութեան հետեւանքով զոհուած 84 իրանցիների մահուան կապակցութեամբ: Հայ ժողովուրդը լինելով ահաբեկչութեան դո՛հ՝ խորապէս դիտակցում է ահաբեկչութիւն երեւոյթի քստմենքի էութիւնը: Խստօրէն դատապարտում ենք ցանկացած տեսակի բռնութիւն եւ ահաբեկչութիւն՝ լինեն դրանք անհատական թէ պետական մակարդակի վրայ: Հայ եւ իրանցի ժողովուրդների բարեկամութիւնը հազարամեակների անցեալ ունի եւ վստահեցնում ենք՝ ձեր վիշտը՝ նաեւ մեր վիշտն է: Վերաւորներին ցանկանում ենք շուտափոյթ ապաքինում, իսկ նահատակների ընտանիքներին՝ համբերութիւն:

ՀՅԴ ԲԻՒՐՕ



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր
եկեղեցւոյ 65-ամեակի յօրելեմական
ճաշկերոյթ



Կարդալ էջ 3

Բաբգէն Արքեպիսկոպոս Ս. Նշան եկեղեցւոյ
համայնքին հետ. 40-ամեակի նշում



Կարդալ էջ 3

HONDA
GABRIEL

THE ALL-NEW 2023
HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777

HYBRID



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Հնտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ 65-ամեակի յօրելեմակամ ճաշկերոյթ

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ 65–ամեակի յօրեկեանական ճաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ, 16 Դեկտեմբեր 2023–ի երեկոյեան, Մոնթ–րէալի Հայ կեդրոնի ՀՄԸՄ–Կամք «Հայկ Մարգարեան» մարգարսահէն ներս, Օրհ–նութեամբ Գերշ. Տէր Բաբգէն Արք․ Չարեանի՝ Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, հովանաւորութեամբ տիար Գրի–գոր Տէր Ղազարեանի,կազմակերպու–թեամբ եկեղեցւոյս Հոգաբարձութեան եւ ներկայութեամբ աւելի քան 380 ազգա–յիններու։ Ներկայ էին նաեւ Լաւալի Ս. Գէորգ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Յա–կոբ Քահանայ Գեաղայսանն ու եկեղե–ւոյ հոգաբարձութիւնը։

Յատուկ յանձնախումբ մը ամիս–ներէ ի վեր կը ծրագրէր ու կը կազմա–կերպէր եկեղեցւոյ 65–րդ այս Յօրեկեա–կանը․ օրեր առաջ արդէն վաճառուած էին բոլոր տոմսերը, եւ Ս. Յակոբ եկե–ղեցւոյ համայնքը անհամբեր կը սպասէր այդ հանդիպման։ Ժամանակէն առաջ ՀՄԸՄ– Կամք մարգարսահ հասած էին եկեղեցւոյս հարիւրաւոր անդամներ, բա–րեկամներ՝ իրենց ընտանեկան պարագա–ներով, հիմնադիրներու զաւակներ ու թոռնիկներ, հին ու նոր ներգաղթողներ, որոնք իրարու կը հանդիպէին, հին յիշա–տակներ վերապրելով․ սրահը վերածուեր էր ուրախ եւ կայտառ ընտանեկան հա–ւաքավայրի մը։

Յօրեկեանական ճաշկերոյթին հան–դիսավարն էր Ս. Յակոբ Ազգային վար–ժարանի Բասդրմաճեան երկրորդականի չըջանաւարտ, ինչպէս նաեւ Ս. Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի երիտասարդ եւ աշխոյժ անդամներէն Հրակ Պանքեան, որ ձեռնհասութեամբ կատարեց իրեն վստահուած պարտակա–նութիւնը։ Ան հրաւիրեց եկեղեցւոյ հո–գաբարձութեան նորրնտիր ատենապետ տիար Սարօ Տէր Պետրոսեանը՝ փոխան–ցելու Հոգաբարձութեան խօսքը։ Երի–տասարդ ատենապետը նչեց, թէ «Միջին Արեւելքէն գաղթած եւ Մոնթրէալի մէջ բնակութիւն հաստատած խումբ մը առաջընթաց եւ գաղափարապաշտ ազ–գայիներ, 1958–ին հիմը կը դնեն Ս. Յակոբ եկեղեցւոյ», եւ աւելցուց, թէ ինչպէս Ս. Յակոբ եկեղեցին դարձաւ առաջին կանգառը Միջին Արեւելքէն Մոնթրէալ հասնող հայերուն, անոնց տրամադրելով անհրաժեշտ ծառայութիւն եւ ընտանեկան մթնոլորտ։

Սարօ Տէր Պետրոսեան դրուատեց այն օրէն ի վեր Ս. Յակոբի հովանիին ներքոյ կատարուած բեղուն գործունէ–ութիւնը, յիշելով Հայ կեդրոնը, Ամէնօր–եայ վարժարանը, Ծաղկոցը, Մանկամ–սուրը, Շաբաթօրեան, Կիրակնօրեան եւ ամառնային ճամբարը։ Ան իր խօսքի աւարտին անդրադարձաւ նոր մարտահ–րաւէրներուն եւ շեշտեց գործնական փո–փոխութիւններու, նոր գործելաոճի եւ մանաւանդ նոր սերունդին լայն տեղ տալու կարեւորութիւնը։

Գեղարուեստական յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ Ս. Յակոբ եկե–ղեցւոյ «Նոր ծաղիկ» երգչախումբը, ղե–կավարութեամբ էլօ Պողոսնի Հարպոյ–եանի, դաշնակի ընկերակցութեամբ Դա–լար Հարպոյեան Գալլօղլեանի։ Երգչա–խումբը շատ զեղեցիկ կերպով մեկնաբա–նեց «Ծիծեռնակի բոյնը», «Շքերթային քայլերդ», « Գարուն երեւան» եւ «Միշտ առաջ» երգերը, մեծապէս տպաւորելով ներկաները։

Ընթրիքի ճոխ սեղանը բացուած յայտարարուեցաւ, եղաւ սեղանի օրհ–նութիւն, միեւնոյն ատեն կատարուեցաւ 65–ամեակի մոմավառութիւնը, բազմա–սերունդ մասնակիցներու կողմէ։

Շատ հաճելի էր լսել Ս. Յակոբ Ազ–գային վարժարանի չըջանաւարտներէն երիտասարդ պատգամաբերներու «սրտի

խօսք»երը․ երիտասարդուհիներ Ալիք Պուլկարեան Աբանեան եւ Արմիկ Եաղճ–եան Սալամէ փոխն ի փոխ պատմեցին իրենց դպրոցական եւ պատանեկութեան օրերէն դրուագներ, ապա թէ ինչպէս եր–կուքը Ս. Յակոբ Ազգային վարժարանին մէջ սկսան դասաւանդելու։ Անոնք անդրադարձան նաեւ իրենց ծնողքնե–րուն երկար տարիներու աշխատանքնե–րուն՝ եկեղեցւոյ եւ Հայ կեդրոնի զանա–զան կազմակերպութիւններուն մէջ, բե–րելով իրենց մասնակցութիւնը «Ս. Յա–կոբ համայնքի բարեբեր հողին», ինչպէս նաեւ իրենց զաւակներուն Սուրբ Յակոբ Ազգային վարժարան յաճախելուն։

65–ամեակի կարկանդակի հատու–մէն առաջ տեղի ունեցաւ պարզեւատ–րում հետեւեալ պատկերով․ «Ասպետ»ի շքանշան ստացան տեարք՝ Գէորգ Օհանեան եւ Ստեփան Չաքմաքճեան (վերջինս բացակայ էր կամքէ անկախ պատճառներով), «Յովհան Մանդակու–նի» շքանշան ստացան տեարք՝ Ռաֆֆի Աբանեան, Գրիգոր Պասմաճեան, Սար–գիս Գուլումճեան, Աստոմ Մալխասեան, Սարգիս Մոմճեան, Լեւոն Նաճարեան, Վարդան Բաբախեան, Բրշ. Սարգիս Սրկ–Եաղճեան եւ տիկնայք՝ Ռիթա Օհանեան, Կիլտա Սուլաքեան, Հիլտա Օդումոշ–եան, Վիգի Զարգաւաթճեան, «Անանիա Շիրակացի»ի շքանշան ստացան տիկ–նայք՝ Շողիկ եւ Յսամիկ Նաճարեաններ, իսկ Առաջնորդ Սրբազան Հօր Օրհնու–թեան Գիրով պարզեւատրուեցաւ Բրշ. Առէն Կիսարկ․ Պապիկեան։ Անկէ ետք կարկանդակի հատումը կատարեցին Գերշ. Տ. Բաբգէն Արք․ Չարեան՝ Առաջ–նորդ Գանատայի Հայոց Թեմին, Արժ. Տ. Գառնիկ Քհն. Գոյունեան՝ հոգեւոր հո–վիւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ եւ Սարօ Տէր Պետրոսեան՝ ատենապետ եկեղեցւոյս Հոգաբարձու–թեան։ Նշեալ արարողութեան պիտի մասնակցէին նաեւ հոգեւոյս Տ. Սուրէն Արք․ Գաթարոյեան՝ եկեղեցւոյս հոգեւոր տեսուչ, եւ տիար Գրիգոր Տէր Ղազար–եան՝ հովանաւոր 65–ամեակի Յօրեկեա–կան ճաշկերոյթին եւ Հոգաբարձութեան երկար տարիներու ժրաջան ատենապետ, որոնք կամքէ անկախ պատճառներով չկրցան ներկայ գտնուիլ ձեռնարկին։

Խանդավառ մթնոլորտի մէջ բեմ բարձրացաւ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք․ Չարեան։ Առաջնորդ Սրբազան Հայրը մեծապէս տպաւորուած անցնող 65 տա–րիներու ընթացքին տարուած աշխա–տանքներէն, յիշեց հիմնադիրներուն կա–տարած կարեւոր աշխատանքը, ըսելով․ «Սուրբ Յակոբ եկեղեցւոյ կամարներուն տակ որքան հաւատացեալներ աղօթած են, որքան շարականներ երգուած են, որ–քան երիտասարդներ նոր ընտանիք կազմած են»։ Ապա անդրադառնալով երիտասարդ պատգամաբերներուն խօս–քին, որով ներկաները կրցան յստակ գա–ղափար մը կազմել Ս. Յակոբ չըջնակէն ներս կատարուած գործերուն մասին։ Ան շնորհաւորեց բոլոր անոնց, որոնք իրենց կեանքը միախառնած են Ս. Յակոբ եկե–ղեցւոյ եւ Հայ կեդրոնին հետ ու յորդո–րեց շարունակել գործը՝ յանուն վաղ–ուան սերունդներուն, յանուն առողջ եւ գիտակից հայերու պատրաստման։

Թէեւ ձեռնարկին ընթացքին կը ցուցաբերուէր խանդավառ մթնոլորտ, բայց անկասկած բոլորս ներքնապէս կը բաժնեկցէինք Արցախի մեր եղբայրնե–րուն եւ քոյրերուն տառապանքը, ցաւն ու վիշտը։

Յիշելով եւ կրկնելով Սրբազան Հօր խօսքը՝ կը բարձրաձայնենք « Փա՛ռք կերտողներուն, փա՛ռք ազգային հիմնա–դիր անձնաւորութիւններուն, ուժ եւ կո–րով բոլորին»։

Զահը փոխանցուած էր։

Տիրուկ Մանճիկեան

Ստորեւ կը ներկայացնենք մո–մավառութեան մասնակիցներուն ցանկը․

Բազմասերունդ մասնակիցներ Մալխասեան Ալիս, Սեդա*, Արաքս եւ Նարեկ, Նառա

Եաղճեան Անի, Սադօ*, Լեւոն

Գաթարոյեան Յովիկ*, Արա*,

Աշոտ

Հաճէթեան Տիանա, Նաթալի*, Մի–

նա

Եմէնիճեան Յովսէփ*, Նայիրի,

Արեգ

Մանճիկեան Տիրուկ*, Լալէ, Սեւան

Բաբախեան Վարդան*, Վարանդ,

Արի

Բաբախեան Նայիրի*, Սոնիա, Քա–

մի

Քէօսէեան Գէորդ, Մանօ*, Գէորդ

Վանլեան Անահիտ, Հայկ*, Քաթ–

իա

Սարգիսեան Վիգէն*, Կարին,

Ռազմիկ

Բժ. ՊասմաճեանԺիրայր*, Սեդա,

Դուին

Գուլումճեան Գրիգոր*, Բաֆֆի,

Իզապէլ

Շահինեան Լիւսի*, Վահէ, Գարուն

Լալէ

* Նշեալները Հոգաբարձութեան

ներկայ կամ նախկին անդամներ են։

Նախկին հոգաբարձական կազմերու անդամներ (1973–1992)

Յակոբ Սիմոնեան 1974–1976

Բժ. Անդրանիկ Պէնօհանեան 1977–

1978

Բժ. Վաղարշ Էհրամճեան 1977–

1980

Բժ. Ժան Առաքելեան 1980–1990

Եդուարդ Յրունճեան 1987–1993

(նաեւ երեսփոխան 1973–1977 չըջանի,

բացակայ՝ կամքէ անկախ պատճառնե–

րով)

Լեւոն Նաճարեան 1989–1995,

2000–2003

Գրիգոր Գուլումճեան 1990–1994

Զաւէն Լալէյեան 1990–1994

Գէորդ Օհանեան 1990–1994,

2012–2018

Պետիկ Քահվէճեան 1992–1998

Ս. Յակոբ եկեղեցւոյ 1973–

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

1977

2024` Մարդուժի Պատրաստութեան Ծարի. Արամ Ա. Կաթողիկոս

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 2003էն սկսեալ, տարիներէն իւրաքանչիւրը ձօնած է հաւաքական կեանքիին առնչուած դէպքի մը, երեւոյթի մը, արժէքի մը կամ մտաեռգութեան մը։ 2024 տարին, Արամ Ա. Կաթողիկոս հռչակած է ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏ-ՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ։

Ստորեւ, այս առթիւ լոյս ընծայուած պատգամը՝ յապաւումով.

Պատկեր

Ընդհանուր ակնարկ մը մեր գաղութներու, հա՛մայնքներու, կազմակերպութիւններու ու կառոյցներու կեանքին վրայ, յստակօրէն ցոյց կու տայ, թէ մարդուժի պակասը հետզհետէ աւելի կը խորանայ ու կը ծաւալի, եւ անոր ալլազան ու բազմազան բացասական հետեւանքները կը դառնան ակներեւ։ Անընդունելի է այս մտահոգիչ կացութեան դիմաց անտարբեր մնալ։ Հա՛մասփիւռքեան այս յոյժ կարեւոր կարիքը դարմանելու հաւաքական աշխատանքին մէջ բոլորս ալ ընելիք ու տալիք ունինք։ Քաջ պէտք է գիտնանք, որ առանց մարդուժի մեր կեանքը պիտի կորսնցնէ իր որակը, պիտի ճահճանայ ու գուճաթափի եւ մեր գոյութեան արմատները պիտի տկարանան։ Մարդուժի պատրաստութիւնը անյետաձգելի առաջնահերթութիւն է։

Ինչո՞ւ մարդուժի պակաս կայ Սփիւռքի կեանքէն ներս. ի՞նչ են ատոր պատճառները։ Անհրաժեշտ է նման հարցադրումներ կատարել եւ առարկայական մօտեցումով փորձել պատասխաններ գտնել։ Մարդուժի իմաստով այսօր հայ կեանքը հետեւեալ պատկերը կը պարզէ. առաջին, մեր ունեցած ներկայ մարդուժը ընդհանրապէս չի համապատասխաներ ներկայ ժամանակներու կարիքներուն ու պահանջներուն։ Երկրորդ, մեր մարդուժին կարեւոր մէկ մասը փաստօրէն կամ հայ կեանքի լուսանցքին վրայ կը գտնուի, եւ կամ հեռու է հայ կեանքէն։

ՆԵՐԿԱՅ ՄԱՐԴՈՒԺԻՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՍ

Պատկեր

Մարդուժի վերակազմակերպման ու հօրացման առաջին կարեւոր քայլը պէտք է ըլլայ՝ հայ կեանքի մայր էջէն հեռու գտնուող մեր մարդուժը ներգրաւել հայ կեանքէն ներս։

Պահ մը դիտենք մեր շուրջը։ Ծի՛ղդ է, մասնագէտներ ունինք զանազան մարզերէն ներս, սակայն անոնցմէ շատեր հեռու են մեր կեանքէն։ Զարգացած երիտասարդներ ունինք, սակայն շատեր մասնակից չեն մեր կառոյցներու գործունէութեան։ Նուիրեալ ուսուցիչներուց ուժինք ունինք, սակայն շատեր կը գործեն ոչ հայկական կրթական կառոյցներէն ներս։ Ինչիւնչ պատճառներով եւ զանազան բնագաւառներէն ներս հայ կեանքէն հեռու մնացած մարդուժին թլուարկումը կարելի է շարունակել։ Այս տիւր իրականութենէն մեկնած, անհրաժեշտ է հարց տալ, թէ ինչո՞ւ մեր մարդուժին մէկ կարեւոր մասը հեռացած է մեր համայնական կեանքէն։ Հարցադրումները մեզ պէտք է մղեն ախտաճանաչումի, եւ ախտաճանաչումը՝ սրբադրումի։ Բոլոր պարագաներուն, մեր մօտեցումը պէտք է ըլլայ իրատես, ո՛չ զգացական. գործնական, ո՛չ տեսական. տեղական, ո՛չ ընդհանրական։ Հարկ է նկատի ունենալ Սփիւռքի զանազան շրջաններուն դիմադրաւած աշխարհաքաղաքական պայմանները եւ անոնց հետեւանքով յաճախ տեղի ունեցած ներքին տեղաշարժերը, տնտեսական պատճառներով որոշ գաղութներու տկարացումը եւ այլ գաղութներու ծաւալումը, համայնքներու նկարագրի փոփոխութիւնը, շրջապատային պայմաններու տարբերութիւնը, եւլն.։ Տակաւ շարունակուող այս բոլոր զարգացումները հարկ է արժեւորել հայ կեանքէն ներս իր ներկայութիւնը հաստատած հա՛մաշխարհային մշակոյթի լոյսին տակ։ Բնականաբար, յիշեալ երեւոյթները իրենց բացասական անդրադարձը ունեցած են որոշ թիւով մարդուժի թէ՛ հայ կեանքէն հեռացման եւ թէ՛ գաղութէ մը այլ գաղութ տեղափոխման վրայ։

Վերոյիշեալ արտաքին ազդակներուն կողքին, նաեւ ներքին եւ անձնական պատճառներ ումանց մղած են հեռու մնալու մեր հաւաքական կեանքէն։ Այսպէս, համայնքային դեկալարութեան ցուցաբերած երբեմն անտարբեր մօտեցումները եւ երբեմն միակողմանի գիրքօրոշումները գաղութը յուզող հարցերուն նկատմամբ, կառոյցներու կեանքէն ներս երեւան եկող մրցակցութիւնները, միւր եւ նոր սերունդներու անյարիւր արտաճեկերպերը, հիւրընկռիւ ճիշդ եւ արժանի գնահատանքը կատարելու պակասը, ինչպէս նաեւ աւելի լայն հորիզոններու բացուելու եւ աւելի բարձր նիւթական եկամուտ ապահովելու ցանկութիւնները, եւայլն։

Այս մտահոգիչ երեւոյթին դիմաց, չենք ուզեր այսպնեւլ ո՛չ հեռու մնացողները եւ ո՛չ ալ անոնց հեռու

մնալուն պատճառ հանդիսացած կառոյցները կամ պատասխանատուները։ Կ'ուզենք բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ շեշտել, թէ աւելի քան երբեք հրամայական է, որ զանազան պատճառներով հայ կեանքէն հեռու գտնուող մեր մարդուժը մօտենայ հայ կեանքին, մասնակից դառնայ մեր հաւաքական ապրումներուն, մաքառումներուն, ծրագիրներուն ու աշխատանքներուն։ Այս հաստատ կամեցողութիւնը ու գիտակից յանձնառութիւնը կը սպասենք հեռու մնացողներէն։ Միաժամանակ՝ կը սպասենք, որ պատասխանատու մարմիններ լայն կարելիութիւններ ստեղծեն մեր մարդուժին ու յատկապէս երիտասարդ ուժերուն, զանոնք ներգրաւելով մեր կառոյցներէն եւ ընդհանրապէս հայ կեանքէն ներս։ Մեզի համար սիրելի եւ յարգելի է մեր մարդուժը։ Հետեւաբար, ընդունելի չէ, որ մեր մարդուժը կազմող անձինք ուրիշներուն դռները թակեն, ուրիշներուն ծառայեն, իրենց մասնագիտութիւնը ու փորձառութիւնը ի սպաս դնեն ուրիշներու յաջողութեան։ Մեզի համար առաջնահերթը, հիմնականը, մնալուն մեր ազգն է, մեր հայրենիքն է, մեր գաղութներն են։

Պատկեր

ՆՈՐ ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Մարդուժի կազմակերպման ու հօրացման երկրորդ կարեւոր քայլը պէտք է ըլլայ նոր մարդուժի պատրաստութիւնը։ Սա դիւրին ու հեզասահ եւ անմիջական կերպով իրագործելի ծրագիր մը չէ։ Հարկ է ըլլալ իրապաշտ։ Մարդուժի պատրաստութիւնը կ'ենթադրէ երկարաշունչ գործընթաց, ամբողջական նուիրում, լուրջ կազմակերպուածութիւն, հետեւողական աշխատանք եւ նաեւ՝ նիւթական լայն ներդրում։ Նայեցէ՛ք ձեր շրջապատին։ Պետութիւններ, կրօններ, կազմակերպութիւններ, կառոյցներ հսկայ աշխատանք կը տանին ու մեծ ներդրում կը կատարեն, նիւթական թէ՛ ալլապէս, մարդուժի պատրաստութեան ի խնդիր։ Արդարեւ, առանց գիտակից, մասնագէտ ու նուիրեալ մարդուն, մեր ունեցածը՝ նիւթականէն սկսեալ մինչեւ հոգեւոր, կրթականէն սկսեալ մինչեւ քաղաքական, ո՛չ մէկ արժէք կը ներկայացնէ։ Մ'արդն է որ անոր արժէք, իմաստ, որակ, ուղղութիւն ու նպատակ կու տայ։

Արդ, ժամանակը հասած է, որ այս գիտակցութեանն ու համոզումէն մեկնած, Սփիւռքի մէջ մեր ուշադրութեան սլաքը կեդրոնացնենք մարդուժի պատրաստութեան վրայ, մեր ունեցած ներուժին եւ կարելիութիւններուն ամբողջական օգտագործումով։ Մարդուժի պատրաստութիւն կը նշանակէ հայ մարդը հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներով շաղախել, մեր ազգին անցեալի ու ներկայի յատկանշական դէպքերուն, դէմքերուն ու մարտահրաւէրներուն ծանօթացնել, ներկայ աշխարհին մասնագիտութիւններուն մէջ խորանալու կարելիութիւն ընծայել, այս բոլորէն վեր ու այս բոլորը իմաստաւորող՝ մեր ժողովուրդին ամբողջական նուիրումով ծառայելու ոգին ներարկել, հայ կեանքին բերելու իր գործօն մասնակցութիւնը։

Ինչպէ՞ս կարելի է Սփիւռքը կազմակերպ մօտեցումով ու վերանորոգ թափով մղել մարդուժի պատրաստութեան։ Հարկ է ի միտի ունենալ, թէ մարդուժի պատրաստութիւնը սոսկ տուեալ կառոյցի մը աշխատանքը չէ, այլ հաւաքական աշխատանք է ու հետեւողական գործընթաց՝ զանազան հանգրուաններէ ընթացող ու նախաձեռնութիւններ ներառող։ Ամփոփ գիծերով կ'ուզենք յիշել այն կառոյցները ու միջոցները, որոնք կարեւոր նպաստ կրնան բերել մարդուժի պատրաստութեան առաքելութեան.

1) Մարդուժի պատրաստութեան հիմնական ու մնայուն խարիսխը ԸՆՏԱՆԻՔԸն է։ Հայ մարդու կազմաւորման ամուր հիմքը կը դրուի ընտանիքէն ներս։ Մեր ծնողներէն շատ բան կը սորվինք լսելով ու տեսնելով։ Մեր ծնողներէն միայն մեր ազգին առնչուած գիտելիքներ չենք ստանար, այլ նաեւ ու մանաւանդ գիտակից ու հպարտ հայ ըլլալու ոգին եւ անսկարկ կերպով մեր ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ ծառայելու նուիրումը։ Արդ, անհրաժեշտ է, որ հայ ընտանիքը վերաշեշտէ մարդուժի գծով իր եզակի դերակատարութիւնը։ Այս յոյժ կարեւոր առաքելութիւնը վերանորոգ նուիրումով կատարելու համար հայ ընտանիքը կոչուած է հեռու մնալ այնպիսի երեւոյթներէ, որոնք կրնան աղարտել իր բարոյական մթնոլորտը ու հայադրոշմ նկարագիրը եւ նսեմացնել վեճ կոչումը։

2) Մարդուժի պատրաստութեան երկրորդ վայրը ԵԿԵՂԵՑԻՆէ։ Եկեղեցին մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու պահպանման հնոցն է ու կենսաւորման աղբիւրը։ Մեր ազգի մեծերէն շատեր եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան հետ իրենց անձը շաղախած են եւ ազգին ու հայրենիքին ծառայելու նախանձախնդրութիւնը ու յանձնառութիւնը եկեղեցիէն ստա՜

ցած։ Զանազան նախաձեռնութիւններու ճամբով (կիրակնօրեայ վարժարան, Սուրբ Գրոց սերտողութիւն, ժողովրդային լսարաններ, քրիստոնէական դաստիարակութիւն, եւլն.) անհրաժեշտ է որ մեր եկեղեցին իր հոգեւոր առաքելութեան ու ազգային ծառայութեան առընթեր, նաեւ զարկ տայ յատկապէս իր ուսուցողական ու դաստիարակչական աշխատանքներուն։

3) Մեր Սուրբ Աթոռի ԴՊՐԵՎԱՆՔԻՆպատակը կը շարունակէ մնալ հոգեմտաւոր արժէքներով թրծուած եւ ազգին ու եկեղեցւոյ ծառայելու կոչումը ունեցող հոգեւորականներու, ուսուցիչներու ու մտաւորականներու կազմաւորումը։ Այս ուղղութեամբ անցնող տասնեակներուն հսկայ աշխատանք է կատարած Դպրեւանքը։ Արդարեւ, Դպրեւանքէն անցած եւ Հայաստանի թէ՛ Սփիւռքի մէջ մեր ազգային կեանքի հոգեւոր, կրթական ու մշակութային բնագաւառներէն ներս կարեւոր ներդրում բերող մեծ թիւով անձերու ներկայութիւնը՝ պերճախօս վկայութիւն մըն է Դպրեւանքին վիճակուած եզակի առաքելութեան։

4) ՀԱՅ ԴՊՐՈՅԸ, բնականաբար, մարդուժի պատրաստութեան կարեւոր կառոյցներէն մէկն է։ Ներկայ ժամանակներուն, դժբախտաբար մեր ծնողներուն մօտ սկսած է որոշ անտարբերութիւն մը ի յայտ գալ հայ դպրոցին նկատմամբ։ Պետական քննութիւններուն իր ձեռք ձգած յաջողութիւններով, իր ջամբած հայեցի դաստիարակութեամբ ու հայակերտ մթնոլորտով հայ դպրոցը մեծապէս կը նպաստէ մարդուժի պատրաստութեան։ Հետեւաբար, անհրաժեշտ է վերաշեշտել հայ դպրոցին մարդակերտումի առաքելութիւնը՝ զօրավիգ կանգնելով անոր նպաստող ծրագիրներուն։

5) Հայ կեանքէն ներս գործող ԲՈՒՈՐ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ՝ կուսակցական, բարեսիրական, մշակութային, մարզական, ընկերային, եւլն. իրենց կարգին մարդուժի պատրաստութեան իւրայատուկ դպրոցներ են։ Արդաւրեւ, ազգային ու մշակութային արժէքներով լեցուն իրենց ներքին մթնոլորտը, ինչպէս նաեւ մեր համայնքներու կարիքներուն ծառայելու իրենց կամաւոր աշխատանքը ալլապէս կը նպաստէ մարդուժի պատրաստութեան։ Ունինք ազգայիններ, որոնք զանազան պատճառներով հայ դպրոց չեն յաճախած, սակայն մաս կազմելով համայնքային կազմակերպութիւններու, հայ կեանքի մասին լայն ծանօթութիւն ձեռք ձգած են եւ իրենց մէջ արմատ նետած է ազգին ծառայելու ոգին։

6) ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸԽԱՅՔԻՆԵՐԸ մարդուժի կազմաւորման մէջ էական դեր ունին։ Այսօր, փաստօրէն, Սփիւռքի մէջ միակ կազմակերպուած Հայագիտական Կեդրոնը Կաթողիկոսարանէն ներս կը գործէ։ Հարկ է նաեւ յիշել Հայէպի Քարէն Եփփէ ձեմարանին ու Հայկազեան Համալսարանին հայագիտական դասընթացքները։ Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնը վերջին 15 տարիներուն ինքնակազմաւորման հանգրուաններէ անցնելէ յետոյ, այսօր իր դասանիւթերու այլազանութեամբ եւ Հայաստանէն ու Սփիւռքէն հրաւիրուած փորձառու ուսուցիչներու ներկայութեամբ, կը գործէ առաւել կազմակերպ ու ինքնավստահ կերպով։

7) Կաթողիկոսարանէն ներս գործող ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԸ, նպատակ ունենալով մանկավարժական նոր մեթոտներով ուսուցիչներու վերաորակաւորումը, յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէ այս մարզէն ներս։ Աւելի քան 35 տարիներու իր գործունէութիւնը եւ մասնաւորաբար պետական քննութիւններուն մէջ ձեռք ձգած յաջողութիւնները ցոյց կու տան, թէ մանկավարժական կազմաւորման ծիրէն ներս իր տարած աշխատանքը կը մնայ առանցքային։

8) Մարդուժի պատրաստութեան վերոյիշեալ հա՛մայնքային կառոյցներէն անդին, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԸ կը նկատենք էական, ինչպէս նաեւ ամբողջացուցիչ մասը մարդուժի պատրաստութեան։ Ներկայ աշխարհը մասնագիտութեան աշխարհ է։ Ընկերութեան կեանքի բոլոր մարզերէն ներս հարցերուն, երեւոյթներուն, տազնապներուն ու ծրագիրներուն նկատմամբ սիրողական մօտեցում փաստօրէն այլեւս տեղ չունի։ Որքան ալ նուիրումը ու պատրաստակամութիւնը անհրաժեշտ նկատուին, նոյնքան անհրաժեշտ է մասնագիտութիւնը։ Ներկայ ժամանակներուն հա՛մալսարանական բարձրագոյն ուսման կեդրոնները ու կարելիութիւնները բազմապատկուած են։ Զարտարագիտութեան ընձեռած լայն միջոցներու լոյսին տակ, համալսարանական ուսումը եղած է աւելի դիւրահաս իթէ՛ ոչ նիւթական, գէթ ժամանակի ու աշխատանքի իմաստով։ Հարկ է որ մեր ուսումնաստենչ երիտասարդերիկաւորուհիները առաւելագոյն չափով օգտուին համալսարանական բարձրագոյն ու մասնագիտական ուսման ընձեռած բարիքներէն։

Բնականաբար, տարբեր պայմաններու մէջ ապրելով, սպասելի չէ որ նոր սերունդը մարդուժի կազմա՜

ԼՈՒՍԱՌՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, Թիւ 2, Յունուար 2024



ՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍ

Նոր Տարի: Նոր Թուական: Նոր Ծնունդ:

Նոր Արեւածագ Բերդեհեմեան երկնականարին վրայ:

Ինչպիսի մեծ հրաշք, Աստուած երկնային բարձունքէն մեզի կ'այցելէ:

Լոյսը՝ Ծագող Արեգակը երկնքէն կ'իջնէ, լուսաւորելու համար խաւարի եւ մահուան ստուերին տակ ապրողները, լուսաւորելու անոնց կեանքի ճանապարհը,

առաջնորդելու դէպի խաղաղութիւն:

Ինչո՞ւ Աստուածորդին աշխարհ եկաւ: Աստուած ինչո՞ւ մարդեղացաւ: Որովհետեւ մարդը մեղքի տիղմին մէջ ընկղմուած էր: Որովհետեւ մարդը խաւարի մէջ կ'ապրէր: Մէկ խօսքով մարդը պէտք ունէր ծագող արեգակին, առաւօտեան բացուող արշալոյսին, այդ լոյսով լուսաւորելու իր խաւարացած սիրտն ու հոգին:

Քրիստոս է ճշմարիտ, յաւիտենական եւ մշտնջենական լոյսը: Ան միշտ եւ ամէն տարի սիրառատ հրաւեր կուտայ մեզի. «Ինծի եկէ՛ք, հաւատացէ՛ք ինծի, վստահեցէ՛ք ինծի»: Եւ երբ մենք լսենք Անոր ձայնը եւ ընդառաջենք Անոր հրաւերին մենք կը թեթեւնանք մեղքի ծանրութենէն:

Աքանջելի եւ մեծ խորհուրդի տօնին, եկէ՛ք քննենք մեր անձերը, երբեւէ Քրիստոսի լոյսը ճառագայթած է մեր սրտերուն մէջ, թէ տակաւին խաւարի մէջ կ'ապրինք: Ինչ է մեր պատասխանը այսօր: Թող Սուրբ Ծննդեան աննիւթական լոյսը մեզի մտածել տայ մեր տալիք պատասխանի մասին:

Քրիստոսի Ծնունդը Աւետիս է՝ Աստուծոյ յաւերժական ու մշտական այցելութիւնը Իր ժողովուրդին:

Ձեզի, մեզի մեծ աւետիս. Երկնքէն ծագող Արեգակը՝ Քրիստոս դարձեալ կ'այցելէ մեզի: Այսօր դարձեալ Հրաւերը ուղղուած է իւրաքանչիւրիս, պատճառաբանութիւններ չգտնենք Յիսուսի առակի փոխաբերական բառերով՝ «հինգ լուծ եզ եմ գներ, նոր արտ գնած եմ, նոր ամուսնացած եմ» եւ հազար ու մէկ պատճառաբանութիւններով: Աստուածային հրաւերին դիմաց ամէն պատճառաբանութիւն յօդա պէտք է ցնդի, փոխարէնը մեր անձերը լեցնելով հրաւերին պատասխան տալու երկիւղածութեամբ եւ պատասխանատուութեամբ:

Ձեզի, մեզի մեծ աւետիս. Երկնքէն լոյսը երկիր իջած է, բանանք մեր աչքերը եւ տեսնենք սփռուած լոյսին գեղեցիկութիւնը, չէ՞ որ լոյսով է գեղեցիկ ամէն ինչ:

Ահաւասիկ պատգամը ՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ...ԱՐԵՒԱԾԱԳԻՆ:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնուեցաւ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մութ ու մեղմ գիշերին, աւետաբեր հրեշտակը երեւելով հովիւներուն փոխանցեց մեծ աւետիսը աշխարհին՝ Ծնունդը Յիսուս Քրիստոսի:

Պարզ ու աղքատիկ մսուրը դարձաւ սուրբ ու արքայաւան, որովհետեւ անոր մէջ ծնաւ Խոնարհ Արքան:

Փայլուն աստղին հետեւելով, երեք մոգեր հասան Բերդեհէմ, խոնարհելու ու երկրպագելու նորածնեալ Մանուկ Յիսուսին:

Հասան Յիսուսին....

Մատթոսի եւ Ղուկասու աւետարաններուն մէջ կը գտնենք Յիսուս Քրիստոսի հրաշափառ ծննդեան դրուագը: Աւետարանիչները բարի լուրը փոխանցելու միտումով գրած են Ծննդեան դրուագը, մէկը շեշտը դնելով մարգարէութեանց վրայ, իսկ միւսը՝ պատմութեան ճշգրտութեան:

Ծնունդը Աստուծոյ սիրոյն գերագոյն նշանն էր, ինչպէս Յովհաննէս Աւետարանիչ կը վկայէ (Յհ 3.16): Աստուծոյ բարութեան եւ խոնարհութեան խորհրդանիշն էր:

Բանն Աստուած ծնաւ, շրջեցաւ երկրի վրայ, սէր քարոզեց, պարգութիւն սորվեցուց, խոնարհութեան տիպար օրինակը դարձաւ, Աստուծոյ արքայութեան մասին քարոզեց եւ յարմարագոյն ժամանկին կամաւորաբար չարչարուեցաւ ու Խաչուեցաւ, Իր կեանքը տուաւ մեզի համար եւ մեզ մեր անկեալ բնութենէն վերականգնեց: Մարդը դարձաւ որդեգիր զաւակը Աստուծոյ:

Հայրն Աստուած մեզի շատ աւելի պատուեց քան Հին Ուխտի նահապետները, դատաւորները, թագաւորներն ու մարգարէները, որովհետեւ անոնց Աստուածը կոչուեցաւ, սակայն մեզի գթալով՝ Իր Միաձին Որդին զրկեց, որ Աստուած-մարդ յարաբերութիւնը դարձուց Հայր-Որդի յարաբերութեան:

Սիրելի ընթերցող, իբրեւ զաւակները Հօր Աստուծոյ մարտահրաւերներ ունինք մեր կեանքին ընթացքին:

ա.- Նմանիլ Քրիստոսի՝ պարգութեամբ ու խոնարհութեամբ:

բ.- Սիրելի մեր նմանները մեր անձերուն պէս եւ հասնիլ կարիքաւորին, անօթիին, ծարաւին, օտարականին, մերկին, բանտարկեալին ու հիւանդին (Մտ 25.31-46):

գ.- Աստուծոյ լոյսը տարածել մարդկութեան, ինչպէս հազարամեակներ առաջ հովիւները եւ ապա առաքեալները կատարեցին:

դ.- Մեր սրտերուն մէջ տեղ պատրաստել Յիսուս Մանուկին, որպէսզի ծնի մեր քարացած սրտերուն մէջ եւ կերպարանափոխէ զանոնք:

ե.- Մոգերուն նման մենք եւս փորձենք հասնիլ Յիսուս Մանուկին:

Թող որ Մտրածին Փրկիչը սէր եւ խաղաղութիւն պարգեւէ աշխարհին, որպէսզի իր ծննդեան օրը իւրաքանչիւր Քրիստոնեայ անհատ նախ փառաբանէ ու սիրէ Տէրը, իր ամբողջ սրտով, հոգիով ու մարմնով եւ երեք մոգերուն նման հետեւին փայլուն աստղին, հասնելու Յիսուս Մանուկին:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ,
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Դուն, Բերթեհէմ, Յուդայի քաղաք, հոչակով նուազ չես Յուդայի միւս քաղաքներէն. որովհետեւ քեզմէ պիտի ելլէ իշխան մը, որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայէլը» (Միքիա 5.2):

“But you, Bethlehem Ephrathah, though you are small among the clans of Judah, out of you will come for me one who will be ruler over Israel.” (Micah 5:2)





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ՇՆՈՐՀՔՆ ՈՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԻԱՅՆ ՏԻՐՈՋ ԿԱՌՉԻԼԸ (ԲԱԺԻՆ Գ.)

«Աստուծոյ խոստումներն ու մարգարէութիւնները կը կատարուին զանգան փորձութիւններու եւ դառնութիւններու միջոցաւ, եւ բոլոր անոնք, որոնք միայն Տիրոջ կը կառչին՝ կը փրկուին չարին փորձութենէն»:

Կամքին քննութիւնն ու պատուիրանապահութիւնը

7. Աստուածաշնչական վերոյիշեալ ապացոյցները վերբերինք, որպէսզի յայտնենք, թէ Աստուծոյ շնորհքն ու Սուրբ Հոգիին պարգեւները ինչպէս, կը գործեն մեծ համբերատարութեամբ եւ երկայնամտութեամբ հաւատքի պայքարը մղող մարդոց մէջ, մանաւանդ փորձութեանց եւ քննութեանց ընթացքին: Մարդուն ազատ կամքը զանազան նեղութիւններով կը քննուի: Եւ եթէ հոգին չտրտմեցաւ, այլ բոլոր պատուիրաններուն հանդէպ իր ցուցաբերած հնազանդութեամբ շնորհքին համաձայն գտնուեցաւ, այն ատեն միայն արժանի կը համարուի ցանկութիւններէն ձերբազատելով՝ ազատութեան հոգիով կատարեալ որդեգրութեան, հոգեւոր հարստութեան, իմաստութեան ու գիտութեան, որոնք այս աշխարհէն չեն: Ասոնք են այն շնորհքները, որոնք ճշմարիտ քրիստոնեաներուն տրուեցան, որպէսզի անոնց հաղորդակից դառնան: Ասոր համար ալ, անոնք բարձր ու հեռու են բոլոր այն մարդոցմէ, որոնք այս աշխարհի հոգիով, իմաստութեամբ եւ գիտութեամբ կ'առաջնորդուին ու կ'ապրին:

8. Հոգեւոր մարդը **«ամէն ինչ կը քննէ»** (Ա. Կր 2.15): Ան մարդուս ամբողջ ներաշխարհը կը ճանչնայ, գիտէ թէ ուրկէ կու գան անոր մտածումներն ու խօսքերը, ինչ են անոր կեցուածքը, վիճակն ու աստիճանները, որոնց մէջ ան

կը գտնուի: Բայց աշխարհի հոգիով առաջնորդուողներէն ո՛չ մէկը կրնայ ճանչնալ կամ քննել հոգեւոր մարդը, այլ միայն ան՝ որ անոր նման երկնատու Հոգին ունի իր մէջ: Այդ պատճառով ալ այդպիսին նոյն գիտութիւնն ու ճանաչումը կ'ունենայ, ինչպէս առաքեալը կ'ըսէ. **«Հոգիին կողմէ ստրվեցուած իմաստութեամբ հոգեւոր ճշմարտութիւններ կը բացապրենք հոգեւոր մարդոց: Աստուծոյ Հոգին չունեցող մարդը չ'ընդունիր Աստուծոյ Հոգիին բերած ճշմարտութիւնները, որովհետեւ անոնք յիմարութիւն կը թուին իրեն...Իսկ Աստուծոյ Հոգին ունեցող մարդը ամէն ինչ կը քննէ, բայց ինք ոեւէ մէկէն չի քննուիր»** (Ա. Կր 2.13-15): Աստուծոյ Հոգին ունեցող մարդիկը այս անցատու ու ժամանակատու աշխարհին պատկանող հարստութիւններուն, վայելքներուն ու ցանկութիւններուն կը նային որպէս մերժելի եւ զգուելի երեւոյթներ:

Քրիստոսի սիրոյն կրակը

9. Երբ մէկը սաստիկ ջերմութեամբ բռնուած կ'ըլլայ, նոյնիսկ ամենահամեղ ճաշերն անգամ կը մերժէ՝ իր մէջ ջերմութեան աստիճանի բարձրացման եւ անոր ունեցած ազդեցութեան պատճառով, նոյնպէս ալ անոնք՝ որոնք երկնային ու սուրբ ցանկութեամբ կը բոցավառին,

այսինքն՝ Հոգիին ցանկութիւնն ու կարօտը իրենց սրտերը Աստուծոյ սիրով կը խոցէ եւ իրենց մէջ կը բոցավառի երկնային սիրոյ կրակը, այն կրակին սաստկութեամբ, որ Տէրը **«եկաւ կրակ ձգելու երկրի վրայ եւ որքան կ'ուզէր որ արդէն իսկ բռնկած ըլլար»** (տե՛ս Դկ 12.9), Աստուծոյ այդ արժանատու որդիները Քրիստոսի հանդէպ երկնային ցանկութեամբ կը ճենճերին եւ այս աշխարհին պատկանող այսպէս կոչուած թանկագին ու փառատուր բոլոր երեւոյթները զգուելի եւ անպէտ կը նկատեն՝ զիրենք շրջապատող եւ իրենց մէջ բոցավառող Քրիստոսի սիրոյն պատճառով, որպէսզի ամբողջ սրտով դէպի Աստուած եւ երկնային բարիքներ յարին: Եւ երկինքի մէջ, երկրի վրայ, կամ երկրի խորերը գտնուող ո՛չ մէկ բան կրնայ զիրենք այդ սէրէն բաժնել, ինչպէս կը վկայէ Պօղոս առաքեալ՝ ըսելով. **«Ո՛վ կրնայ մեզ բաժնել Քրիստոսի սէրէն. Նեղութիւնը, անձկութիւնը, հալածանքը, սովը, մերկութիւնը, վրանձը կամ...ոչ վերին եւ ոչ ալ ներքին աշխարհները, ոչ ալ ուրիշ սպրեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ»** (Հռ 8.35-39):

*Մեծն Սուրբ Մակար
(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 3)*

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆՁԵԼԻ

Սուրբ Ծնունդ:

Բոլոր տօներու սկիզբն ու հիմը, եւ կարեւորագոյնը, որովհետեւ պիտի չըլլար Յարութիւն առանց ծնունդի, պիտի չըլլար մեղքերու քաութիւն եւ մարդոց փրկութիւն առանց մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան: Եկեղեցւոյ սուրբ հայրեր, ծննդեան տօնը նաեւ կը կոչեն խորհուրդ մեծ եւ սքանչելի, որովհետեւ մարդկային մեր տրամաբանութիւնը ո՛չ կրցած է հասկնալ եւ ո՛չ ալ պիտի կարենայ հասկնալ, թէ ինչպէ՛ս պատահեցաւ, որ անսահմանն Աստուած աշխարհ գալով սահմանուեցաւ, ինչպէ՛ս կրնայ ըլլալ, որ ամբողջ այս տիեզերքի Տէրն ու Ստեղծիչը տեղ մ'իսկ չ'ունենայ ծնելու, ինչպէ՛ս պատահեցաւ, որ մարդոց փրկութիւն բերողը մերժուեցաւ մարդոց կողմէ, ծաղրուեցաւ, անարգուեցաւ ու Խաչ բարձրացաւ եւ այդպիսով իր կեանքը աւարտեց այս աշխարհի մէջ:

Մեծ է խորհուրդը երբ կը մտածենք, թէ ինչպէ՛ս այս բոլորը պատահեցան, սակայն իրապէս, որ սքանչելի է երբ կը գիտնանք, թէ ի՛նչն էր այս բոլորին պատճառը: Հարցումին պատասխանը կը գտնենք Աւետարանին մէջ. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը որ մինչեւ իսկ իր Միաձին որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յափտենական կեանք ունենայ» (Յովհաննէս 3.16):

Ստեղծագործութեան ժամանակ, երբ Աստուած տեսաւ, որ աշխարհը խաւարի մէջ կը գտնուի, հրամայեց ըսելով, «եղիցի լոյս», եւ աշխարհը լուսաւորուեցաւ: Կարծես պատմութիւնը անգամ մը եւս ինքզինք կրկնեց, Աստուած տեսնելով, ող մարդոց սիրտը խաւարացած է, իր Միաձին Որդին դրկեց, իբրբwwwեւ մեր մէջ ծագող ու քնակող Լոյս, որ լուսաւորելով մեր կեանքը առաջնորդեց դէպի փրկութիւն, սակայն ցատք սրտի մարդկային պատմութիւնն ալ ինքզինք կրկնեց, դարցեալ մարդը անհնազանդ գտնուելով սիրեց խաւարը անելի քան լոյսը:

Սիրելի ընթերցողներ, եկէ՛ք այս սուրբ տօնին առթիւ պատմութիւն փոխողները մենք ըլլանք, որպէս լոյսի ու հաւատքի ժողովուրդ, չընդունինք մեր Տէրն ու Փրկիչը այնպէս ինչպէս ընդունեց Հերովդէս, սուրերով, ատելութեամբ ու նախանձով: Այլ դիմատրենք Քրիստոսը այնպէս ինչպէս հովիւներն ու մոզերը դիմատրեցին, ուրախութեամբ ու փառաբանանքով: Թող որ մեր նուէրները Քրիստոսի ծննդեան առթիւ ըլլան, իրեն նուիրուած մեր աղօթքները, ժամանակը, մեր անձերը: Անոր նուիրենք խոնարհ հոգի մը, որ երբեք ատելութիւն չի գիտեր: Խաղաղ միտք մը, որ երբեք չարութիւն չի մտածեր: Մանաւանդ սիրող սիրտ մը, որ երբեք նենքութիւն չի ճանչնար, այլ կը գիջի իր նմանին ու Աստուծոյ պատկերը ցոյց կու տայ ամբողջ աշարհին:

Հետեաբար եկէ՛ք այս խորհուրդով ընդանանք, իրար ողջունենք մաքուր սրտերով, ծայնակցինք հրեշտակներու զօրքերուն եւ ըսենք. «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փանօք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն»: Գեղեցկագոյն մաղթանքն է, որ կրնանք ըսել մէկս միայն: Շնորհակալութեամբ փառք տանք Աստուծոյ, պահենք Քրիստոսի բերած խաղաղութիւնը, որովհետեւ աշխարհի խաղաղութիւնը կու գայ մարդոց միջեւ եղող հաճութենէն: Քրիստոս ծնաւ եւ յատնեցաւ, ձեզի մեզի մեծ աւետիս:

Տէր Նշան

ԱՌԱՎՍ ԶԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ...

ՍՊԱՆԱԽԻՆ ԱՆՈՒՆԸ

Քննական իր խօսքին մէջ սպանախ [շոմին] կոչուած բանջարեղէնին անունը ստուգաբանելով, բժիշկ մը կ'ըսէ թէ սպանախ բառը կը նշանակէ հիւանդութիւն կայ, ճիշդ կ'ըլլայ որ նախ այդ հիւանդութիւնը սպաննել եւ յետոյ որպէս կերակուր տալ զայն, որովհետեւ բաւական վսասակար է: Հիւանդ մարդ մը ասիկա իմանալով, ամբողջութեամբ կը հրաժարի զայն ուտելէ, առանց գիտնալու, որ բոլոր հիւանդութիւններուն համար չէ ըսուածը:

Այս առակը հետեւեալը կը յայտնէ. Իմաստուններուն պատուիրանները ստուգաբանելով, կը գտնեն, որ զեղխութիւնները պէտք է արմատախիլ ընել, քան թէ պահք բռնելու պատուէր տալ: Ասկէ, անմիտ մարդիկ կը խորհին ամբողջութեամբ հրաժարիլ պահքէն, ուրիշներու համար պահքը աւելորդ կը թուի, բայց ոչ բոլոր հոգեկան հիւանդներու պարագային, ինչպէս շոմինը, որ ոմանց համար վսասակար է, սակայն շարքերու համար՝ պիտանի դեղ:

ՄԽԻԹԱՐ ԳՕՇ

FAMILY AND HOME

Take a few moments each day to be in a state of appreciation for the immediate surroundings that you call home, regardless of how grand or humble they might be. Give thanks to those who provide this home, to those who share it with you, and to God for the blessing of a shelter.

Do whatever you can to assist those in our world who do not have a home. While some may make the choice to be vagabonds and have a new place to call home each day, others are homeless through no deliberate choice. Be of service, financially, spiritually, or physically, to those who would love to have a more permanent place called home.

Teach those who share your home with you to honor and revere it, not only for its physical attributes, but for the space of shelter and love that it represents.

WISDOM OF THE AGES
WAYNE W. DYER

ՍՈՂՈՄՈՆ, ԻՄԱՍՏՈՒՆ ԹԱՎԱԴՐԸ

Դաւիթին յաջորդեց իր որդին՝ Սողոմոնը:

Գիշեր մը Սողոմոնի երագին մէջ Աստուած երեցաւ: Տէրը ըսաւ.

- Սողոմոն, խնդրէ, ինչ որ կ'ուզես:

- Իմաստութիւն տուր ինձի, որ գիտնամ ինչը ճիշդ է, ինչը՝ սխալ, պատասխանեց Սողոմոն:

Աստուծոյ համար հաճելի եղաւ Սողոմոնի պատասխանը:

Սողոմոն շատ իմաստուն դարձաւ: Անիկա շատ շքեղ տաճար մը կառուցեց Աստուծոյ համար:

Օր մը երկու կիներ եկան Սողոմոնի մօտ: Երկուքն ալ փոքրիկներ գրկած էին: Առաջին կնոջ երեխան մահացեր էր, երկրորդինը ողջ էր: Անոնք երկուքն ալ կը պնդէին, որ ողջ մանուկը իրն է: Սողոմոն հրամայեց.

- Կիսեցէք ողջ մանուկը, կէսը տուէք մէկուն, միւս կէսը՝ միւսին:

- Ո՛հ, ո՛հ, ճշգր կիներէն մէկը, Տէր թագաւոր, փոքրիկը իրեն տուէք, միայն թէ չսպաննեն:

Իսկ միւս կինը ըսաւ.

- Ճիշդ ես, արքայ, ո՛չ ինձի, ոչ իրեն:

Թագաւորը շունչ քաշեց եւ ըսաւ.

- Փոքրիկը տուէք առաջին կնոջ: Անիկա է անոր իսկական մայրը, որովհետեւ ըսաւ այն, ինչ որ իսկական մայրը պիտի ըսէր:

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՍԻ
ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿԸ





ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

«Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ...»

Աստուածայայտնութիւն կը նշանակէ Աստուծոյ յայտնուիլը: Յիսուս Քրիստոսի աստուածայայտնութիւնը կը բովանդակէ ոչ միայն Իր Ծնունդը, այլ նաեւ Մկրտութիւնը, եւ այլն: Այս պատճառաւ Փրկչին Ծնունդն ու Մկրտութիւնը միասին կը տօնախմբուի մեր Եկեղեցոյ մէջ՝ Յունուարի 6-ին, շաբթուան որ օրն ալ պատահի, Քրիստոնէական Եկեղեցոյ վաղեմի աւանդութեան համեմատ:

Լատին Եկեղեցին Դեկտեմբեր 25-ին փոխադրեց զայն, սատուոնալեան տօները խափանելու համար:

Յոյն եկեղեցին Դեկտեմբեր 25-ին կը տօնէ Ծնունդը, իսկ Մկրտութիւնը՝ Յունուար 6-ին:

Կ'երեւի թէ մեր Եկեղեցոյ մէջ Մկրտութիւնը ատեն մը տօնուած է Ութօրէքին, որովհետեւ Ութօրէքի Շարականը (Լոյս ի լուսոյ) Մկրտութեան շարական է:

Ծննդեան տօնի առտուն, սուրբ պատարագէն ետք կը կատարուի Ջրօրինէք, որ յիշատակն է Յիսուս Քրիստոսի Մկրտութեան Յորդանանու մէջ՝ Յովհաննէս Մկրտչի ձեռքով:

ԲԱԲԳԷԼ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԾՆԴԴԵԱՆ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւնքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր Արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրինեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ:

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻԷՆ

Տէր, յորդառատ աղբիւր հոսեցուր զլիսու, ոռոգէ մտքին անդաստանները, լուսն յանցանքներուս աղտերը, եւ սրբէ վէրքերուս թարախը: Իսլէ մեղքերուս փուշը, եւ տնկէ կեանքի բոյսը: Տէր, աճեցուր արդարութիւնը, նուազեցուր անօրէնութիւնը, եւ նորոգէ հոգիիս կենդանութիւնը:

Տէր, կանչէ Քեզի մեղանչած անձս, որովհետեւ չեմ համարձակիր մօտենալ Քեզի:Ամօթս կը պատկառիմ, գործերէս կը զարհուրիմ, եւ համարձակութիւն չունիմ մօտենալու Քեզի: Ես կորսուեցայ, սուրբ պատուիրաններէդ հեռացայ, փառքէդ մերկացայ: Իսկ դուն, Տէր, գթած ինձի եւ ողորմէ, որովհետեւ Քու անարատ ձեռքովդ զիս ստեղծած ես:

ՏՆՕՐՀՆԵՔ

Քրիստոնեայ հայ ընտանիքին հաւատքի ցայուն արտայայտութիւններէն մին է Տնօրինէքը:

Հնամենի աւանդութիւն մը, որ տունը եկեղեցոյ կը վերածէ, աղօթքն ու շարականը ընդիսառնուելով բուրումնաւէտ խոնկի ծուփին, կրօնական ջերմ օրինութեամբ աղցուն, դիմագիծ մը կու տան մեր ընտանեկան յարկին, որուն այսօր այնքան կարիքն ունինք մենք եւ յատկապէս մեր զաւակները:

Խոր գիտակցութիւն մը կը համակէ մեր սիրտն ու հոգին, թէ Աստուած ներկայ է մեր բնակարանէն ներս, եւ աստուածային օրինութիւնը զօրավիզ՝ մեր բոլոր դժուարութիւններուն, մեր աշխատանքին եւ նախաձեռնութիւններուն:

Միանգամայն պէտք է ընդունինք, որ հայկականութեան դրոշմ մը կայ տնօրինէքի արարողութեան մէջ, որ մեզ կը կապէ մեր աւանդութիւններուն, որոնք հայապահպանման ներդրում են, եւ կնիք՝ պատկանելիութեան, օտար այս երկնականարներուն ներքեւ, հայօրէն ապրելու եւ պահելու մեր նախնեաց հաւատքը, աւանդութիւններն ու ազգային դիմագծութիւնը:

Ուրեմն վերոյիշեալ զգացումներով մեր կեանքը հայկականութեամբ ջրդեղած, պարտինք խոր գիտակցութեամբ տարին երկու անգամ՝ Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան տօներուն հրափրել հոգետր հովիւը եւ օրինութիւնը հայցել մեր ընտանեկան յարկերուն:

